ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար,

Կից ներկայացնում ենք ՀՀ մուտքի վիզաների տպագրական աշխատանքների կազմակերպման մեկ անձից գնման ընթացակարգի արձանագրությունը:

Առդիր՝ 19 էջ:

?????? ????????
Jan 27 2010 1:06 PM

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ


Կատարող՝ ֆինանսական վարչության
բյուջետայի ծրագրավորման բաժին
Ջ. Ադամյան
544 041( 288)

Հաստատում եմ

Է. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

*25.01.2010թ.* Կ.Տ

# ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1 1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ արտաքին գործերի նախարարություն Հասցեն Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարության 2 շենք

1.2. Գնման ընթացակարգի կազմակերպման գործը համակարգող անձի

Պաշտոնը ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության պետ

Անունը, ազգանունը Տիգրան Սեյրանյան

Հեռախոսը /աշխ/ 54 40 41 301 Ֆաքսը _____ Էլ. փոստի հասցեն _____

1.3. Գնման առարկայի տեսակը

ապրանք ☐ աշխատանք ■ ծառայություն ☐

1.4 Կարիքի բավարարման միջոցը

գնում ■ վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.5. Գնման առարկայի համառոտ նկարագիրը «ՀՀ մուտքի վիզա» պիտակների տպագրման աշխատանքներ

1.6. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Հասցեն ք.Երևան, Չարենցի 25

Հեռախոսը /աշխ/ 64 82 29, Ֆաքսը _____ Էլ. փոստի հասցեն _____

1.7. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը ՀՀ ԱԳՆ ԱՁԲ-1

Կնքման ամսաթիվը 19.01.2010թ

Գործողության ժամկետը մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը

Գինը 60 000 000 (Վաթսուն միլիոն) ՀՀ դրամ

1.8. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ 2010թ պետական բյուջե

Բյուջեից ֆինանսավորվելու դեպքում նաև բյուջետային ծախսերի դասակարգման՝

Բաժին 08 խումբ 03 Դաս 02 Ծրագիր 07

Նախարարություն (գերատեսչություն) 104005 և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվից Հոդված 4234

1.9. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո ☐ Ոչ ■

Ամսաթիվը ______________ Համարը ______________

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը՝ 1.ՀՀ կառավարության 24.12.2009թ. թիվ 1522-Ն որոշում,

2. ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 8-Ա որոշում

Օրը, ամսաթիվը՝ 1. Պաշտոնական հրապարակման հաջորդ օրը

2. 19.01.2010թ.

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում [X] Տեխնիկական հսկողության հանձնաժողով

Անվանումը ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչություն

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը Վարչության պետ Տ. Սեյրանյան

2.3 Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.

X արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4 Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը՝

ՀՀ վարչապետի 30.12.09թ-ի հ/հ02/167/10101-09 հանձնարարական:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներակայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում [X]

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին, որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| N | Անվանումը (անուն, ազգանունը | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ք.Երևան Չարենցի 25 | N 23/00525 առ 19.01.2010թ. |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| N | Անվանումը (անուն, ազգանունը | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ք.Երևան Չարենցի 25 | N Ե-003/10 առ19.01.2010թ |

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո [ ] Ոչ [X]

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո [ ] Ոչ [X]

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները

Եթե այո, ապա նշել՝ Այո ☐ Ոչ ☒

| Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

3.5. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Եթե այո, ապա նշել՝ Այո Ոչ ☒

Պատվիրատուից ներկայացնող անձի (անձանց)

Անուն, ազգանունը
Պաշտոնը

Մասնակցից ներկայացնող անձի (անձանց)

Անուն, ազգանունը ____________________
Պաշտոնը ____________________
Բանակցությունների արդյունքների համառոտ նկարագիրը ____________________

4. Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիարատուն գնման գործընթացը.

Եթե այն, ապա նշել՝ Այո ☐ Ոչ ☒

Կացեման հիմքը՝ պատճառը ____________________
Կասեցման ժամկետը ____________________

5. Բողոքարկում

Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Եթե այո, ապա նշել՝ Այո ☐ Ոչ ☒

| Բողոքը ներկայցրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Բողոքի համառոտ նկարագիրը | Բողոքը ներկայացնելու ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

Ընդունե՞լ է պատվիրատուն որոշում բողոքի կապակցությամբ.

Եթե այո, ապա նշել՝ Այո ☐ Ոչ ☒

| Որոշման համառոտ բովանդակությունը | Նման որոշում կայացնելու իրավասության հիմքը | Բողոքը ներկայացրած անձին որոշումը տրամադրելու ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |

| | | |
|---|---|---|
| | | |

Եթե ոչ, ապա նշել՝

| Որոշում չկայացնելու պատճառը | Բողոքը ներկայացրած անձին ծանուցելու ամսաթիվը |
|---|---|
| 1 | 2 |
| | |

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ☒

Եթե այո, ապա նշել՝

| Բողոքը ներկայցրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Բողոքի համառոտ նկարագիրը | Բողոքի մասին պատվիրատուին ծանուցելու ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

Ընդունե՞լ է լիազոր մարմինը որոշում ներկայացված բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ☒

Եթե այո, ապա նշել՝

| Որոշման համառոտ բովանդակությունը | Լիազոր մարմնի որոշումը ստանալու ամսաթիվը |
|---|---|
| 1 | 2 |
| | |

6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անուն, ազգանունը Ջուլիետա Աղամյան
Պաշտոնը ԱԳՆ ֆինանսական վարչության բյուջետային ծրագրավորման բաժնի վարիչ
Հեռախոսը /աշխ/ 54 50 41 288

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

19.01.2010թ.
23/00525

«ԷՅ ԵՄ Փ Ի ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Հ. ՆՈՐԱՄԻՐՅԱՆ

Հայտնում ենք, որ ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը անհրաժեշտություն է առաջացել 2010 թվականին ՀՀ պետական բյուջեի տեղեկատվական ծառայություններ հոդվածով հատկացված գումարների հաշվին ձեռք բերելու ՀՀ մուտքի վիզային պիտակների 240 000 հատ տպագրական աշխատանքները `համաձայն կից ներկայացված տեխնիկական բնութագրի:
Առաջարկվում է Ձեզ կատարել վերոհիշյալ աշխատանքները:

Գնումները ֆինանսավորվելու են 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «ԷՅ ԵՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույքը արգելանքի տակ չի գտնվում,

կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում`

- դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
- գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
- իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ աշխատանքների գնման պայմանագրի նախագիծը:

Առդիր 4 էջ:

Հարգանքներով`

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Շ. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2 ՇԵՆՔ, ԵՐԵՎԱՆ 0010; ՀԵՌ. 37410/544041, ՖԱՔՍ 37410/543925
2 GOVERNMENT BUILDING, REPUBLIC SQUARE, YEREVAN 0010, ARMENIA; TEL. 37410/544041, FAX 37410/543925; COMGROUP@MFA.AM

19.01.2010թ

№ Ն-003/10

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ
Շ. ԱՎԱԳՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 19.01.2010թ N 23/00525 գրության հավաստում ենք, որ «Էյ ԷՄ Փի Ջի ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունքը, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,

կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

- դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար
- գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
- իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Էյ Էմ Փի Ջի ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտնում է իր համաձայնությունը՝ Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված տպագրական աշխատանքները կատարել 60 000 000 (Վաթսուն միլիոն) ՀՀ դրամով:

Հարգանքներով՝

«Էյ Էմ Փի Ջի ԳՐՈՒՊ » ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Հ. ՆՈՐԱՄԻՐՅԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԳՆ ԱՁԲ-1

ք. Երևան 19 հունվարի 2010թ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Շ. Ավագյանի, որը գործում է կանոնադրության հիման, վրա մի կողմից, և «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Նորամիրյանի , այսուհետ՝ «Կապալառու», որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիր հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է ՀՀ կառավարության 24.12.2009թ. թիվ 1522-Ն և 14.01.2010թ. թիվ 8-Ա որոշումներով հաստկացված միջոցների շրջանակներում սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի համար կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված հատուկ պաշտպանվածությամբ համապատասխանաբար 80 000 հատ և 160 000 հատ ընդամենը 240 000 հատ «ՀՀ մուտքի վիզա» պիտակների 01072951-ից 01312950-ը հերթական համարակալմամբ տպագրական աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքները և վճարել դրա համար:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքները կատարվում են՝ 80 000 հատ պիտակների տպագրման մասով՝ ՀՀ կառավարության 24.12.2009թ. թիվ 1522-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 25 աշխատանքային օրվա ընթացքում, 160 000 հատ պիտակների տպագրման մասով՝ մինչև 23.02.2010թ. ընկած ժամանակահատվածում:

### 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2. Կապալառուի կողմից Աշխատանքների կատարման ժամկետների խախտման դեպքում պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2. կետով նախատեսված տույժը:

2.1.3. Չընդունել Աշխատանքները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.4.Մինչև Աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կապալառուին տրամադրել սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ՝ տեխնիկական բնութագրով նախատեսված բոլոր տեղեկությունները և նյութերը.

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքները, իսկ Աշխատանքի արդյունքը վաթարացնող շեղումներ կամ Աշխատանքներում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

2.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում կատարված Աշխատանքները ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում ՝ նաև սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը.

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. Մինչև Աշխատանքները Պատվիրատուին ներկայացնելը, պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարած Աշխատանքների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքերի.

2.3.2. Մինչև Աշխատանքները պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարելուց՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառած վնասները՝ ՝այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Միակողմանի հրաժարվել սույն պայմանագրի կատարելուց, եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են վճարման ժամկետները

2.4. Կապալառուն պարտավոր է

2.4.1. Ապահովել Աշխատանքների կատարումը սույն պայմանագրով նախատեսված ժամկետում:

2.4.2 Կատարել Պատվիրատուի կողմից նախանշված որակի և քանակի տպագրական Աշխատանքներ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

2.4.3. Սույն պայմանագրով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետներում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը.

2.4.4. Աշխատանքների 100 %-ը կատարել անձամբ:

2.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

### 3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1 Կապալառուն Աշխատանքների ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարած Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ.

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը.

3.3 Կապալառուի կատարած Աշխատանքները Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից.

### 4. Աշխատանքների գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 60 000 000 (Վաթսուն միլիոն) ՀՀ դրամ, ընդ որում Աշխատանքների մեկ միավորի գինը կազմում է 250 ՀՀ դրամ: Գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2. Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքները ընդունելու դեպքում վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 10 բանկային օրվա ընթացքում:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքների որակի և Պայմանագրով նախատեսված՝ կատարման ժամկետների պահպանման համար:

5.2. Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ չկատարված Աշխատանքների գնի 0.05%-ի չափով:

5.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանքներ կատարելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

5.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.5. Սույն պայմանագրով նախատեսված՝ Կապալառուի նկատմամբ հաշվարկված տուգանքները և տույժերը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքները կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարից:

5.6. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

### 6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն | ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ | ք.Երևան, Չարենցի 25 |
| Կառավարության 2 շենք | ԱՇԻԲ բանկ ՓԲԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Տիգրան Մեծ մ/ճ h/h 247490012660/3312 |
| h/h 900011196202 | ՀՎՀՀ 01531784 |
| ՀՎՀՀ 02527728 | |
| -------------------- (ստորագրություն) | -------------------- (ստորագրություն) |

Հավելված N1
«19» «01» 2010թ. կնքված
«ՀՀ [illegible]» [illegible] պայմանագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱՅԻ [illegible]
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. *Պաշտպանված թուղթ*
Պատված է ՈՒՄ լույսն արտացոլվող կանաչ և կապույտ մանրաթելերով

2. *Պաշտպանված հետնապատկերներ*
Մանրագծերով կառուցված նախշեր

3. *Միկրոգծեր*
Տարբեր հաստությունների միկրոգծեր, որոնցով կառուցվում են բարդ հյուսվածքներ

4. *Միկրոգրություն*
Ընթեռնելի է դառնում միայն խոշորոցման դեպքում

5. *Գելեոշիրային էլեմենտ*
Չընդհատվող գծերից բաղկացած գծանկար

6. *Թաքնված պատկեր*
Տեսանելի է դառնում օպտիկական ֆիլտրի օգնությամբ

7. *Կանաչ ՈՒՄ ներկ*
Այս ներկով տպված բոլոր օբյեկտները անտեսանելի են և տեսանելի են դառնում միայն ՈՒՄ լույսի ներքո և արտացոլվում են կանաչ գույնով

8. *Հոլոգրամմա*
Որի գույները փոփոխվում են տարբեր անկյունների տակ և արտացոլում են Հայաստանի Հանրապետության զինանշանի և դրոշի գույները

9. *Անհատական համարակալում*
Յուրաքանչյուր վիզան ունի իր անհատական համարը, որը ՈՒՄ լույսի ներքո կարմրում է

10. *Միկրոկտրվածք*
Տարբեր անկյունների տակ կան տարբեր ձևով կտրվացքներ, որոնք բացառում են վիզայի երկրորդ անգամ օգտագործելու հնարավորությունը

11. *Հատուկ ներկով պատկեր (OVI )*
Այս ներկով տպված օբյեկտը շոշոփելի է ձեռքով և տարբեր անկյունների տակ դիտվում է երկու տարբեր գույներով

| Պատվիրատու | Կատարող |
| --- | --- |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք. Երևան, Հանրապետության հրապապակ<br>Կառավարության 2 շենք<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>h/h 900011196202<br>ՀՎՀՀ 02527728<br><br>(ստորագրություն) | ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ<br>ք.Երևան, Չարենցի 25<br>ԱՇԻԲ բանկ ՓԲԸ<br>Տիգրան Մեծ մ/ճ h/h 247490012660/3312<br>ՀՎՀՀ 01531784<br><br>(ստորագրություն) |

Նախագիծ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԳՆ ԱՉԲ-1

ք. Երևան «» « » 2010թ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Շ. Ավագյանի, որը գործում է կանոնադրության հիման, վրա մի կողմից, և «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Նորամիրյանի , այսուհետ՝ «Կապալառու», որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիր հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կապալառուն պարտավորվում է ՀՀ կառավարության 24.12.2009թ. թիվ 1522-Ն և 14.01.2010թ. թիվ 8-Ա որոշումներով հաստկացված միջոցների շրջանակներում սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի համար կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված հատուկ պաշտպանվածությամբ համապատասխանաբար 80 000 հատ և 160 000 հատ ընդամենը 240 000 հատ «ՀՀ մուտքի վիզա» պիտակների 01072951-ից 01312950-ը հերթական համարակալմամբ տպագրական աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքները և վճարել դրա համար:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքները կատարվում են՝ 80 000 հատ պիտակների տպագրման մասով՝ ՀՀ կառավարության 24.12.2009թ. թիվ 1522-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 25 աշխատանքային օրվա ընթացքում, 160 000 հատ պիտակների տպագրման մասով՝ մինչև 23.02.2010թ. ընկած ժամանակահատվածում:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2. Կապալառուի կողմից Աշխատանքների կատարման ժամկետների խախտման դեպքում պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2. կետով նախատեսված տույժը:

2.1.3. Չընդունել Աշխատանքները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.4.Մինչև Աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կապալառուին տրամադրել սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ՝ տեխնիկական բնութագրով նախատեսված բոլոր տեղեկությունները և նյութերը.

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքները, իսկ Աշխատանքի արդյունքը վաթարացնող շեղումներ կամ Աշխատանքներում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

2.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում կատարված Աշխատանքները ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում ՝ նաև սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը.

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. Մինչև Աշխատանքները Պատվիրատուին ներկայացնելը, պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարած Աշխատանքների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքերի.

2.3.2. Մինչև Աշխատանքները պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարելուց՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառած վնասները՝ ՝այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Միակողմանի հրաժարվել սույն պայմանագրի կատարելուց, եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են վճարման ժամկետները

2.4. Կապալառուն պարտավոր է

2.4.1. Ապահովել Աշխատանքների կատարումը սույն պայմանագրով նախատեսված ժամկետում:

2.4.2 Կատարել Պատվիրատուի կողմից նախանշված որակի և քանակի տպագրական Աշխատանքներ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

2.4.3. Սույն պայմանագրով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետներում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը.

2.4.4. Աշխատանքների առնվազն 75 %-ը կատարել անձամբ:

2.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

### 3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1 Կապալառուն Աշխատանքների ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարած Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ.

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը.

3.3 Կապալառուի կատարած Աշխատանքները Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից.

### 4. Աշխատանքների գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ------------ (---------------) ՀՀ դրամ, ընդ որում Աշխատանքների մեկ միավորի գինը կազմում է ------------ ՀՀ դրամ: Գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2. Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքները ընդունելու դեպքում վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 10 բանկային օրվա ընթացքում:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքների որակի և Պայմանագրով նախատեսված՝ կատարման ժամկետների պահպանման համար:

5.2. Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ չկատարված Աշխատանքների գնի 0.05%-ի չափով:

5.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանքներ կատարելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

5.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.5. Սույն պայմանագրով նախատեսված՝ Կապալառուի նկատմամբ հաշվարկված տուգանքները և տույժերը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքները կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարից:

5.6. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>Կառավարության 2 շենք<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>հ/h 900011196202<br>ՀՎՀՀ 02527728 | ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ<br>ք.Երևան, Չարենցի 25<br>ԱՇԻԲ բանկ ՓԲԸ<br>Տիգրան Մեծ մ/ճ h/h 247490012660/3312<br>ՀՎՀՀ 01531784 |
| --------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | --------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված N1
« » « » 2010թ. կնքված
«ՀՀ ԱԳՆ ԱՉԲ-1» ծածկագրով պայմանագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱՅԻՆ ՊԻՏԱԿՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1 *Պաշտպանված թուղթ*
Պատված է ՈՒՄ լույսն արտացոլվող կանաչ և կապույտ մանրաթելերով

2 *Պաշտպանված հետնապատկերներ*
Մանրագծերով կառուցված նախշեր

3 *Միկրոգծեր*
Տարբեր հաստությունների միկրոգծեր, որոնցով կառուցվում են բարդ հյուսվածքներ

4 *Միկրոգրություն*
Ընթեռնելի է դառնում միայն խոշորոցման դեպքում

5 *Գելեոշիրային էլեմենտ*
Չընդհատվող գծերից բաղկացած գծանկար

6 *Թաքնված պատկեր*
Տեսանելի է դառնում օպտիկական ֆիլտրի օգնությամբ

7 *Կանաչ ՈՒՄ ներկ*
Այս ներկով տպված բոլոր օբյեկտները անտեսանելի են և տեսանելի են դառնում միայն ՈՒՄ լույսի ներքո և արտացոլվում են կանաչ գույնով

8 *Հոլոգրամմա*
Որի գույները փոփոխվում են տարբեր անկյունների տակ և արտացոլում են Հայաստանի Հանրապետության զինանշանի և դրոշի գույները

9 *Անհատական համարակալում*
Յուրաքանչյուր վիզան ունի իր անհատական համարը, որը ՈՒՄ լույսի ներքո կարմրում է

10 *Միկրոկտրվածք*
Տարբեր անկյունների տակ կան տարբեր ձևով կտրվածքներ, որոնք բացառում են վիզայի երկրորդ անգամ օգտագործելու հնարավորությունը

11. *Հատուկ ներկով պատկեր (OVI )*
Այս ներկով տպված օբյեկտը շոշափելի է ձեռքով և տարբեր անկյունների տակ դիտվում է երկու տարբեր գույներով

**Պ ա տ վ ի ր ա տ ու**
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարության 2 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
h/h 900011196202
ՀՎՀՀ 02527728

-------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

**Կ ա տ ա ր ո ղ**
ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 25
ԱՇԻԲ բանկ ՓԲԸ
Տիգրան Մեծ մ/ճ h/h 247490012660/3312
ՀՎՀՀ 01531784

-------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2010 թվականի N 8 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետություն մուտքի վիզաների տպագրության աշխատանքները կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը 2010 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 40000.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հունվարի 18
Երևան

Ak069.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան, Կառավարական տուն 1

**ՀՀ արտաքին գործերի նախարար**
**պարոն Էդվարդ Նալբանդյանին**

**ՀՀ ֆինանսների նախարար**

**պարոն Տիգրան Դավթյանին**

---

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ խնդրում եմ իրականացնել մեկ անձից գնում կատարելու միջոցով և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

Ժամկետ՝ 5օր:

Դավիթ Սարգսյան

Հ ․․․․․-ը ․․․12․․․-ի, 2009 թ.

հ/հ ․․․02/16.7/10101-09

Հ 8813
13 DEC 2009

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ. 596-659, քարտուղարություն, հեռ. 596-125

N 25/01-65056 «26» 12 2009թ.

Ձեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն վարչապետ

25.12.2009թ. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացվել է գրություն ՀՀ մուտքի վիզայի ձևաթղթերի խմբաքանակը սպառվելու վերաբերյալ:

Գրության համաձայն, նոր խմբաքանակի տպագրության համար ԱԳՆ կողմից հայտարարվել է պարբերական մրցույթ, սակայն մրցույթի մասնակիցներ չեն գրանցվել:

ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչությունը առաջարկել է անձնագրային և վիզաների վարչության տրամադրության տակ եղած վիզայի ձևաթղթերը սպառվելու դեպքում, ՀՀ սահմանային անցակետերում մուտքի վիզաների տրամադրումը կազմակերպել դրոշմակնիքներով:

Նշված առաջարկությունը ՀՀ ոստիկանության համար ընդունելի չէ, քանի որ չի համապատասխանում ՀՀ մուտքի վիզաների տրամադրումը կանոնակարգող ՀՀ կառավարության 04.10.2007թ. թիվ 1268-Ն որոշման պահանջներին:

Բացի այդ, մուտքի վիզայի՝ դրոշմակնիքներով տրամադրումը խնդիրներ կառաջացնի վիզաները ՀՀ կառավարության 22.06.2006թ. թիվ 884-Ն որոշմամբ սահմանված կարգով սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրելիս, քանի որ գործող համակարգչային ծրագիրը նախատեսված է ներկայումս գործածվող վիզայի ձևաթղթերով մուտքագրումը կատարելու համար:

Ներկայումս Անձնագրային և վիզաների վարչությունում առկա է ՀՀ մուտքի վիզայի 3500 ձևաթուղթ, որը ՀՀ սահմանային անցման կետերի ԱՎՎ

52

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ 016-20368
Մուտք թիվ 28 12 09

ստորաբաժանումներում առկա մնացորդի հետ (5500 հատ), կարող է առավելագույնը բավականացնել մինչև 2010թ. հունվարի 20-ը:

Հայտնելով վերոգրյալը և հաշվի առնելով հարցի հրատապությունը, խնդրում եմ Ձեր համաձայնությունը ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ մուտքի վիզայի ձևաթղթերի տպագրությունը կազմակերպելու ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ